

Կազմակերպության համախառն կապիտալի միջին կշռված արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևերով:

$$P_{նկ} = \sum (S_i \times P_i):$$

Չեղարկվող դրա մակարդակը կախված է ոչ միայն կապիտալի առանձին բաղադրիչներից, այլև համախառն կապիտալում դրա կազմավորման յուրաքանչյուր աղբյուրի մասնաբաժնից: Թանկարժեք աղբյուրների մասնաբաժնի ավելացման դեպքում ավելանում է նաև միավորին ընկնող կապիտալի արժեքը, եւ հակառակը: Տվյալ գործոնների ազդեցությունը հաշվարկելու համար կարելի է օգտվել բացարձակ տարբերությունների եղանակից.

$$\Delta P_{S_{նկ}} = \sum (\Delta S_i \times P_i),$$

$$\Delta P_{P_i} = \sum (\Delta S_i \times P_i):$$

Փոխառու միջոցները սովորաբար դասակարգում են՝ կախված դրանց մարման արագության աստիճանից եւ ապահովվածության եղանակից: Ըստ մարման արագության աստիճանի՝ պարտավորությունները բաժանում են երկարաժամկետի եւ ընթացիկի: Երկարաժամկետ հիմնուցով ներգրավվող միջոցներն ուղղում են երկարատե օգտագործման ակտիվների ձեռքբերմանը, այն դեպքում, երբ ընթացիկ պահվելը, որպես կանոն, շրջանառու միջոցների ձեւավորման արդյունքում հայտարարելու դեպքում մարվում են մրցութային զանգվածից: Պարտավորությունների կառուցվածքի գնահատման համար միանգամայն էական է դրանք չափահովվածների եւ ապահովվածների բաժանելը: Նման խմբավորման կարեւորությունն այն է, որ ապահովված պարտավորությունները ձեռնարկությունը լուծարելու եւ մրցութային արտադրություն հայտարարելու դեպքում մարվում են մրցութային զանգվածից: Որքան շատ են մարված (ապահովված) պարտքերը, ի հակադրություն չափահովվածների, այնքան լավ՝ այն վարկատուների համար, ովքեր ունեն ապահովված պահանջներ, բայց վատ է մնացած վարկատուների համար, որոնք մրցութային հայտարարելու դեպքում պետք է բավարարվեն մնացած ունեցվածքային զանգվածով:

Ֆինանսավորումը՝ ի հաշիվ փոխառու կապիտալի, կատարվում է վարկատուների կողմից դրամական միջոցները վերադարձելու համար: Վճարելիության պայմաններով հստակացվելու դեպքում: Այդպիսի ֆինանսավորումը նախատեսում է փոխառուի եւ փոխառուի միջև մշտական վարկային հարաբերություններ, այլ ոչ թե կազմակերպության կապիտալի ավելացում՝ դրամական միջոցների ներդրման ուղիով: Կազմակերպությանը վարկեր տրամադրելու դեպքում առաջանում են լրացուցիչ ծախսեր, որոնք կապված են դրանք մարելու եւ տոկոսներ վճարելու հետ: Հաշվապահական հաշվառմամբ՝ վարկի դիմաց տոկոսները ներառվում են գործառնական ծախսերի կազմում, եւ հենց դրանով նվազեցվում է հարկվող շահույթը:

Փոխառու միջոցների հաշվին ֆինանսավորումը ստորաբաժանվում է երկու տեսակի.

✓ ֆինանսավորում՝ ի հաշիվ կարճաժամկետ վարկերի,

✓ ֆինանսավորում՝ ի հաշիվ երկարաժամկետ վարկերի:

Կարճաժամկետ փոխառու կապիտալը ծառայում է շրջանառու ակտիվների ֆինանսավորման աղբյուր: Հարկ է նշել, որ պատվիրատուի կողմից կատարվող կանխավճարները նույնպես կարող են դիտարկվել որպես անտոկոս վարկ մատակարարին: Այդ մեխանիզմը լայն կիրառում ունի հատկապես արեմտյան երկրների խոշոր եւ միջին առեւտրային կազմակերպություններում, ինչն անհրաժեշտ է հաշվի բիզնեսի արժեքը գնահատելիս:

Երկարաժամկետ վարկերի ձեւով ներգրավված կապիտալն ուղղվում է հիմնական կապիտալի նորացմանը եւ ոչ նյութական ակտիվների ձեռքբերմանը: Ի տարբերություն փոխառությունների միջոցով ֆինանսավորման, երկարաժամկետ բանկային վարկերի օգտագործումը՝ ըստ համապատասխան պարտքային պարտավորության, փոխառուին ընձեռում է հետևյալ առավելությունները.

✓ միջոցներ չեն ծախսվում՝ արժեթղթեր թողարկելու կամ դրանք էլեկտրոնային կրիչներում հաշվառելու, ինչպես նաև գովազդելու եւ տեղաբաշխելու համար,

✓ իրավական հարաբերությունները փոխառուի եւ փոխառուի միջև հայտնի են սահմանափակ անձանց,

✓ վարկի տրամադրման պայմանները կողմերը որոշում են ըստ յուրաքանչյուր գործարքի,

✓ նվազում է վարկային հայտ ներկայացնելուց հետո այն ստանալու ժամկետը՝ ի տարբերություն ֆոնդային շուկայից արժեթղթերի տեղաբաշխումից միջոցներ ստանալու ժամկետի:

Սեփական եւ փոխառու կապիտալի միջև եղած հիմնական տարբերությունները բնորոշում են հետևյալ չափանիշներով.

✓ իրավունքների առաջնայնություն,

✓ դրամական գումար ստանալու որոշակիության աստիճան (ստանալու փաստը եւ գումարը),

✓ դրամական գումարները ստանալու ժամկետներ: Արտոնյալ բաժնետոմսերի տերերը առավելություն տվող իրավունքներ ունեն հասարակ բաժնետոմսերի տերերի նկատմամբ: Վարկատուներին վճարվող գումարների չափը սովորաբար ամրագրվում է որոշվում է կա՛մ դրամական որոշակի գումարով, կա՛մ նախնական կա՛մ անվանական գու-

1. Бочаров В.В., Леонтьев В.Е.,

Корпоративные финансы, СПб.: Питер, 2004, с. 205.

2. Ли Ченг Ф., Финнерти Д.И., Финансы корпорации: теория, методы и практика, ИНФРА-М, 2000, с. 295.

3. Д.ж.К. Ван Хорн, Основы управления финансами, Москва, Финансы и статистика, 1999, с. 414.

4. Նույն տեղում, էջ 447

Օգտագործված գրականություն

1. В.Э. Керимов, Бухгалтерский учет на производственных предприятиях, Дашков и К., 2001, 348 с.

2. И.В. Романенко, Бухгалтерский учет на промышленном предприятии, Москва 2000, 239 с.

3. В.Е. Ануфриев, Бухгалтерский учет основных средств, капитала и прибыли, Москва, Бухгалтерский учет, 2002, 111 с.

4. В.Я. Кожин, Бухгалтерский учет, Оценка прибыльности хозяйственных операций, ЭКЗАМЕН, 2001, 399 с.

5. В.П. Астахов, Бухгалтерский (финансовый) учет, Март 2001, 831 с.

6. Н.А. Каморджанова, Бухгалтерский финансовый учет, Питер 2002, 464 с.

7. Е.Н. Станиславчик, Бизнес план: финансовый анализ инвестиционного проекта, Ось-89, 2000, 95 с.

8. К. Друри, Введение в управленческий и производственный учет, Аудит, 1998, 774 с.

9. А. К. Макальская, Внутренний аудит, Москва, Дело и Сервис, 2000, 80 с.

10. А. Запорожан, Все об акциях, Питер 2001, 256 с.

մարով՝ ավելացված նախատեսված տոկոսը, որը հանդես է գալիս որպես վճար վարկատուին՝ դրամական կամ այլ պաշարներն օգտագործելուց նրա հրաժարվելու դիմաց: Դիվիդենտների չափը որոշվում է ստացված զուտ շահույթով, դիվիդենտային քաղաքականությամբ, դրամական միջոցների առկայությամբ, զուտ ակտիվների չափով, այլ գործոններով: Միջոցների աղբյուրների կառուցվածքի վերլուծության մեջ կարևոր հարց է սեփական և փոխառու միջոցների հարաբերակցության ռազմավարության գնահատականը: Սեփական կապիտալի հաշվին գործող կազմակերպության ֆինանսավորումը կարող է իրականացվել, նախ, շահույթի վերաներդրման ճանապարհով, երկրորդ՝ կազմակերպության կապիտալի մեծացման հաշվին (նոր արժեթղթերի թողարկում): Տվյալ աղբյուրները կազմակերպության գործունեության ֆինանսավորման համար օգտագործելը սահմանափակող պայմանը վերաներդրման ծավալը որոշող զուտ շահույթի բաշխման քաղաքականությունն է, ինչպես նաև բաժնետոմսի լրացուցիչ եմիսիայի հնարավորությունը: Առանձնահատուկ պետք է նշել այն բարդությունները, որոնց բախվում են ձեռնարկությունները, երբ լուծում են լրացուցիչ կապիտալ ներգրավելու հարցը՝ կազմակերպարժակական ձեռք փոխելու և բաց բաժնետիրական ընկերություն ստեղծելու ժամանակ: Նման որոշմանը պետք է նախորդեն՝ կապիտալի պահանջի որոշումը (միանգամայն սխալ կարող է լինել «որքան շատ, այնքան լավ» համոզման վրա հիմնված մոտեցումը), իրավական նոր կարգավիճակին անցնելու հետ կապված ծախսերի նախնական գնահատականը, տվյալ որոշման հետ կապված առավելությունները և նոր հիմնախնդիրների բացահայտումը: Փոխառու միջոցներ ներգրավելով՝ ձեռնարկությունը ձեռք է բերում մի շարք առավելություններ, որոնք որոշակի հանգամանքների դեպքում կարող են շրջվել հակառակ կազմով և հանգեցնել կազմակերպության ֆինանսական վիճակի վատթարացման՝ նրան մոտեցնելով սնանկացման եզրին: Փոխառու աղբյուրներից ակտիվների ֆինանսավորումը կարող է գրավիչ լինել այնքանով, որքանով վարկատուն չի ներկայացնում ուղղակի պահանջներ ու հավանություններ՝ կազմակերպության ապագա եկամուտների նկատմամբ: Անկախ արդյունքներից՝ վարկատուն իրավունք ունի հավակնել, որպես կանոն, հիմնական պարտքի պայմանավորված գումարին և դրա տոկոսներին: Մատակարարների ապրանքային տեսքով ստացվող փոխառու միջոցների համար վերջին բաղադրիչը կարող է դրսեւորվել ինչպես բացառապես, այնպես էլ ըողարկված տեսքով: Միաժամանակ՝ փոխառու միջոցների օգտագործման համար նախատեսված վճարի հետ կապված ծախսերի առկայությունը տեղափոխում է կազմակերպության ոչ վնասաբերության առանցքը: Այլ կերպ ասած՝ ոչ վնասաբեր աշխատանքի հասնելու համար ձեռնարկությունը ստիպված է լինում ապահովել վաճառքների ավելի մեծ ծավալ: Այսպիսով՝ փոխառու կապիտալի մեծ մաս ունեցող ձեռնարկությունը քիչ հնարավորություն ունի մաներել չնախատեսված հանգամանքների դեպքում, ինչպես արտադրանքի պահանջարկի նվազումը, տոկոսադրույքների նշանակալի փոփոխությունը, ծախսերի աճը, սեզոնային տատանումները: Ֆինանսական անկայուն դրության պայմաններում դա կարող է դառնալ վճարունակությունը կորցնելու պատճառներից մեկը. ձեռնարկությունն ի վիճակի չի լինում ապահովել միջոցների ավելի մեծ ներհոսք, ինչն անհրաժեշտ է ավելացած ծախսերը փակելու համար: Հիմնական պարտքի վճարվող գումարները, դրամական միջոցների ար-

տահոսք հանդիսանալով, հաշվի չեն առնվում հարկադրման բազան որոշելիս: Որոշակի պարտավորությունների առկայությունը կարող է ուղեկցվել այս կամ այն պայմանով, որոնք սահմանափակում են կազմակերպության ազատությունը ակտիվները տնօրինելու և կառավարելու հարցում: Սահմանափակվող այդպիսի պայմանների առավել տիպիկ օրինակ են գրավադրման պարտավորությունները: Եղած պարտքի մեծ չափը կարող է հանգեցնել այն բանին, որ պարտատերը հրաժարվի նոր վարկ տալ:

Կազմակերպությունների կողմից միայն սեփական կապիտալի օգտագործումը կհանգեցնի հետեւյալ ոչ ցանկալի հետևանքների.

- ✓ ձեռնարկատիրական գործունեության ծավալների ընդլայնման անհրաժեշտության դեպքում ներգրավվող միջոցների սահմանափակվածության,
- ✓ սեփական կապիտալի համեմատաբար բարձր արժեքի, քանի որ կորպորատիվ պարտատոմսերի դիմաց վճարվող տոկոսային ծախսը միշտ ցածր է,
- ✓ բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման, որն էլ, որպես կանոն, հանգեցնում է կանոնադրական կապիտալի չափերի ավելացման,
- ✓ սեփական կապիտալի շահութաբերության հավելածի ապահովման անհնարինության՝ ի հաշիվ ֆինանսական լծակի, քանի որ փոխառու միջոցների ներգրավման հնարավորությունները սահմանափակվում են:

Այսպիսով՝ այն կազմակերպությունը, որը միջոցների գոյացման աղբյուր կօգտագործի միայն սեփական կապիտալը, կապահովի ֆինանսական առավելագույն կայունություն, իսկ ֆինանսական անկախության գործակիցը կձգտի մեկի: Բայց այդ պայմաններում կսահմանափակվեն կազմակերպության հեռանկարային զարգացման տեմպերը, քանի որ հրաժարվելով փոխառու կապիտալի ներգրավումից շուկայական բարենպաստ ելքակառուցվածքի դեպքում՝ կազմակերպությունը կգրկվի ակտիվների ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրից: Առավել ծանր կլինի վիճակը՝ ֆինանսական տեսանկյունից խոշորածավալ ծրագրերի դեպքում: Ուստի, հաշվի առնելով վերը բերված փաստարկները, անհրաժեշտություն է առաջարկել օգտագործել փոխառու կապիտալի դրական հատկանիշները, որոնցից, մեր կարծիքով, առավել էականը հետեւյալն են.

- ներգրավման լայն հնարավորությունները, հատկապես՝ եթե փոխառուի վարկային ռեյտինգը բավական բարձր է,
- արտադրության և վաճառքի ծավալների ընդլայնումը ակտիվների ավելացման նպատակով՝ բարձրացնելով կազմակերպության ֆինանսական ներուժը,
- սեփական կապիտալի շահութաբերության հավելածի օգտագործման հնարավորությունը՝ ի հաշիվ ֆինանսական լծակի, այն պայմանով, որ ակտիվների շահութաբերությունը գերազանցի վարկի դիմաց միջին հաշվարկային դրույքը,
- վարկերի համեմատաբար ցածր արժեքը բաժնետոմսերի թողարկման համեմատ՝ ի հաշիվ «հարկային վահանի» էֆեկտի, քանի որ բանկային վարկերի դիմաց վճարվող տոկոսները դասվում են գործառնական ծախսերի խմբին:

Ինչ վերաբերում է փոխառու կապիտալի օգտագործման թերություններին, ապա կարող ենք նշել, որ մեծ ծավալներով փոխառու կապիտալի ներգրավումն առաջացնում է կազմակերպության համար վտանգավոր ֆինանսական ռիսկեր: Ակտիվները, որոնք ձեռավորվել են փոխառու կապիտալի հաշվին, այլ հավասար պայմանների դեպքում պայմանավորում

ՀՏԴ 658 : 336

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՈՒՍԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ

Մարտին
ՂԱԶԱՐՅԱՆ

են կապիտալի շահույթի տրաման, քանի որ լրացուցիչ ծախսեր են առաջանում վարկատուների առջեւ՝ պարտքի սպասարկման գծով: Միաժամանակ՝ վարկային շուկայի տատանումներից առկա է լինում փոխառու կապիտալի արժեքի զգալի կախվածություն, հատկապես՝ միջոցների երկարաժամկետ փոխառության դեպքում:

Կատարված ուսումնասիրության արդյունքների հիման վրա կարող ենք եզրահանգել, որ այն կազմակերպությունը, որը փոխառու միջոցներ է ներգրավում բանկային վարկի կամ փոխառության պարտատոմսի ձեռքով, ապահովում է տնտեսական կայուն աճի հուսալի ռեզերվներ եւ ստանում սեփական կապիտալի զուտ շահութաբերության ավելացման հնարավորություններ: Սակայն նման կազմակերպություններն ավելի շատ են ենթարկվում ֆինանսական ռիսկերի ազդեցությանը եւ հայտնվում սնանկացման վտանգի առջեւ, եթե փոխառու կապիտալի մասնաբաժինը պասիվում գերազանցում է թույլատրելի սահմանաչափը:

Կապիտալի ձեռավորման երկրորդ սկզբունքը պահանջում է տարբեր աղբյուրներից դրա ձեռավորման ծախսերի հնարավորինս մինիմալացում, ինչը ձեռք է բերվում կապիտալի արժեքի եւ կառուցվածքի վերահսկման գործընթացում:

Կապիտալի ձեռավորման երրորդ սկզբունքը նախատեսում է տնտեսական գործունեության ընթացքում կապիտալի արդյունավետ օգտագործում: Այս սկզբունքն իրագործվում է ֆինանսական ռիսկերի մինիմալացման պայմաններում սեփական կապիտալի շահութաբերության բարձրացման ուղիով:

Ամփոփելով՝ նշենք, որ առեւտրային կազմակերպություններում կապիտալի ձեռավորման գործընթացը հանգում է ներդրումային որոշակի մոդելի կազմմանը, որի ելակետում պարտադիր պետք է պահպանվեն քննարկված երեք հիմնական սկզբունքները, ինչպես նաեւ իրատեսորեն գնահատվեն փոխառու կապիտալի ներգրավման հնարավորությունները՝ դրական ու բացասական հետեւանքներով հանդերձ: Արդյունքում՝ գործող կազմակերպություններում անհրաժեշտ է լինում կապիտալի կառուցվածքում պարբերաբար կատարել փոփոխություններ:

1. Богатин Ю.В., Швандар В.А., Оценка эффективности бизнеса и инвестиций, М.: Финансы, ЮНИТИ-ДАНА, 1999, с. 254.
2. Шарп У.Ф., Александер Г.Дж., Бэйли Дж.Б., Инвестиции, Москва 1998, с. 264-275.
3. Бочаров В.В., Леонтьев В.Е., Корпоративные финансы, СПб.: Питер, 2004, с. 37-61.

Օգտագործված գրականություն

1. Шеремент А.Д., Сайфулин Р.С., Негашев Е.В., Методика финансового анализа, 3-е изд. перераб. и доп., М.-ИНФРА-М, 2001, 208 с.
2. Шеремент А.Д., Сайфулин Р.С., Финансы предприятий, Уч. пособие для претендентов на получение квалиф., аттест. аудитора и проф. бухгалтера, а также для экон. спец-й вузов, М.ИНФРА-М: 199-324 с.
3. Modigliani F., Miller M. (1958), The Cost of Capital, Corporate Finance, and the Theory of Investment, American Economic Review, Vol. 48, #4, pp. 261-297.
4. Modigliani F., Miller M. (1963), Corporate Income Taxes and the Cost of Capital: A Correction, American Economic Review, Vol. 53, #3, pp. 147-175.
5. Modigliani F., Miller M. (1966), Some estimates of the Cost of Capital to the Electric Utility Industry 1954-1957, American Economic Review, pp. 261-297.

Կերչին տարիներին աշխարհի եւ՝ զարգացած, եւ՝ զարգացող երկրներում նկատվում է տնտեսության մեջ փոքր ու միջին բիզնեսի (ձեռնարկատիրության) դերի ավելացման միտում: Դա մեծապես կապված է տնտեսության այդ հատվածի նկատմամբ վարվող պետական աջակցության քաղաքականության իրականացման հետ, որը ֆինանսական եւ մարդկային զգալի ռեսուրսներ է պահանջում: Այդ պատճառով տնտեսական այդպիսի քաղաքականությունը միանշանակ չի ընդունվում ինչպես ակադեմիական, այնպես էլ քաղաքական շրջանակներում:

Փոքր ու միջին ձեռնարկատիրությանը (ՓՄՁ) պետական աջակցության կողմնակիցները հիմնավորում են, որ ձեռնարկատիրական բարենպաստ միջավայրի առկայության դեպքում այն կարող է նպաստել գործազրկության բարձր մակարդակի կրճատմանը համեմատաբար կարճ ժամանակահատվածում, եական ներդրում ունենալ տեխնոլոգիական առաջընթացում, ապահովել արտադրողականության ավելացում եւ տնտեսական բարձր աճ², նպաստել երկրի արտահանման ավելացմանը՝ միջազգային շուկաներում հաջողությամբ մրցակցելով վերազգային կորպորացիաների հետ³, նպաստել ապրանքային շուկաների եւ աշխատաշուկայի արդյունավետության բարձրացմանը⁴:

Քննադատները պնդում են, որ շուկայական զարգացած տնտեսություններում տեխնոլոգիական առաջընթաց եւ տնտեսական զարգացում ապահովում է առավելապես խոշոր բիզնեսը^{5,6}, իսկ ՓՄՁ-ի վրա հիմնված տնտեսական զարգացումը հատուկ է տնտեսական զարգացման համեմատաբար ցածր մակարդակ ունեցող երկրներին^{7,8}:

Հիպոթեզի ձեռնարկումը եւ փոփոխականների օպերացիոնալացումը. վիճակագրական վերլուծությունը նպատակ ունի ստուգել հետեւյալ հիպոթեզի հավաստիությունը.

Ho: տնտեսական զարգացման համեմատաբար բարձր մակարդակ ունեցող երկրներում տնտեսության մեջ ՓՄՁ-ի դերը համեմատաբար փոքր է:

Եթե տնտեսական զարգացման մակարդակը նշանակելու X փոփոխականով (գործուն), իսկ տնտեսության մեջ ՓՄՁ-ի դերը՝ Y (կախյալ փոփոխական), ապա հիպոթեզը X-ի եւ Y-ի միջև հակադարձ կապ է ենթադրում՝ $X \Rightarrow Y$:

Երկրի տնտեսական զարգացման մակարդակը կարելի է օպերացիոնալացնել մակրոտնտեսական ազդեցված ցուցանիշների, օրինակ՝ մեկ շնչին ընկնող ՀՆԱ, վճարային հաշվեկշիռի մնացորդ/ՀՆԱ հարաբերակցություն, կամ գործույթի վերլուծության մեթոդով կազմված վարկանիշային սանդղակների կիրառման միջոցով: Կոնստրուկտի օպերացիոնալացման ճշգրտության եւ վստահելիության (Validity) մակարդակի բարձրացման տեսանկյունից նպատակահարմար է կիրառել երկրորդ մեթոդը:

Այդպիսի վարկանիշային սանդղակ հրապարակում է World Economic Forum հեղինակավոր միջազգային կազմակերպությունը: Այս սանդղակում ներառված են 140-ից ավելի երկրներ, այդ թվում՝ ՀՀ-ն: Վարկանիշի կազմման հիմքում ընկած է ձեռնարկությունների եւ երկրի տնտեսության փորձագիտական հետազոտությունների միջոցով իրականացվող գործույթի վերլուծությունը: Հաշվի առնելով նշված առավելությունները, նպատակահարմար է X փոփոխականը չափել՝ օգտագործելով վերոնշյալ վարկանիշային սանդղակը եւ հետեւյալ ձեռնարկման ֆունկցիան.

$$X = f(GCI) = \begin{cases} 3, & GCI = \text{stage 3.} \\ 2, & GCI = \text{stage 2 կամ transition from 2 to 3} \\ 1, & GCI = \text{stage 1 կամ transition from 1 to 2} \end{cases}$$

GCI - երկրի արտադրողականության մակարդակն է՝ ըստ WEF-ի դասակարգման, X - երկրի տնտեսական զարգացման մակարդակն է:

Տնտեսական զարգացման առաջին մակարդակում գտնվող երկրներին բնորոշ է արտադրողականության ցածր մակարդակ, արտահանման մեջ գերակշռում է գյուղատնտեսական եւ հանքահումքային արդյունաբերության արտադրանքը, այս երկրները արտադրում են հիմնականում ոչ բարդ տեխնոլոգիաներ պահանջող արտադրանք: Երկրորդ մակարդակում գտնվող երկրներին բնորոշ է արտադրողականության համեմատաբար բարձր մակարդակ, տնտեսական զարգացումը տեղի է ունենում արտադրական գործընթացների արդյունավետության բարձրացման եւ արտադրանքի որակի բարե-